32. ԽԱՄԲԵՐ ԱՂՋԻԿ

Կէլնի մեյ թակաւվորըմ: Ինոր սիրողըմ կեր:

Թակավոր սիրողին կասի. - Կուզեմ փսայվեմ, ի՞նչ կասես:

Սիրողն ասայ. - Ես հրաման կուտամ փսայվելու, աման հրաման չեմ տա, որ խեստ զրյուցես:

Մարթու մ'իրեքյ ախչիկ կեր: Թակավոր կնայ էն իրեքյ քյուրերայ ճեռչն առեց:

Խեստը փսայվավ, ամա իսկի խեստ չզրյուցեց:

Կնիկն տրսնընխինգյ օր աչկեց, տեսավ, որ թակավոր խեստ ուր չի զրյուցի, էլավ իթող, էկավ խերանց տուն:

Խերն ասայ. - Ախչի, ընչի՞ էկար:

Ասայ. - Աղա՛, թակավոր խե զի չէր զրյուցե: Ես մեյ փոր խայ ապեով ընչի՞ մընի ինոր մոտ:

Էն որ ըսկուն ասայ, միճնեկ քյեորն էլավ կնայ ուր քյուրոչ բանալ թակավրու տուն:

Միճնեկ քյեորն էլ տրսնընխինգյ օր աչկեց, էն էլ էլավ, իթող էկավ տուն:

Էսա տրիս պստիկ քյեորն էլավ կնայ: Թակավորն ինոր խեստն էլ չզրյուցեց:

Պստիկ քյեոր մտածեց, ինքյ ուր ասայ. «Անունս թակավրու կնիկ ի, բեսլամեքյ առճես, ի՞նչս պակաս ի, իսկի էլ թող խեստս չզրյուցի, չեմ էրթա, կմնամ ըստեղ»:

Քյուրեր էլան քյամար'մ էօրեոխկեցին ուրենց քյուրոչ, փորձալու խամար, ասին. խենքյ փարա ունի:

Ախչիկն էլավ ճրաքյ պռնեց ծեռ, կայնավ մեչ տռան: Թակավոր որ էկավ, ասայ. - Ճրաքյ, քյե կասեմ, մարթու չեմ ասե, քյուրերս քյամար են էօրեոխկե, կասեն՝ առ:

Թակավոր ճրաքյին ասայ. - Ճրաքյ, քյե կասեմ, տյու՝ դան վուսկով չահմաչեն՝ դան:

Ախչիկն փարեն իխան, էօրեռխկեց քյուրերաց, քյամարն առեց:

Քյուրերն ասին, - Էսա չէլավ, թակավրու տուն ի, փարա-մարա իսկե ծեռ:

Էլան տավաթ ուզեցին, որ խասկընան, թե ի՞նչխ ի ուրենց քյուր էսա կանդար օր մնացի մո թակավոր: Չէլնի՞ թակավոր խետ ինոր կզրյուցի:

Կնիկ էլըմ ճրայի կպռնի ծեռ, կայնի մեչ տուսն, կասի. - Ճրա՛յի, քյե կասեմ, մարթյու չեմ ասե, քյուրերս էօրեռխկեր են, տավաթ կուզեն:

Թակավորն ասաց. - Տյու՝ դան, աշչին՝ դան, ինչ կուզես՝ էն արա:

Առատուն կէլնի, ինչ որ կա կէօրեռխկի, կպիրի, կառնի կիազրի:

Կէլնի կէօրեռխկի քյուրերաց իտե, կպիրի:

Ուր պախած կնգյան էլ կթամխի, կասի. - Կես սահաթ տիր մ'արի, ասա. «Խանըմ, արե, թակավոր քյե կկանչի»:

Քյուրեր էկան, նստան խացի:

Պուխած կնիկ կես սահաթ դիրըմ կուզյա, կկանչի. - Խանըմ, արե՛, թակավոր քյե կկանչի:

Խանըմ կէրթա, դեորըմ կկայնի տյուս, էլըմ կուզյա, որ քյուրեր կիդնան թե, աղորթմանց, թակավրու խետ զրյուցե:

Էն գյախ որ էկավ ներս, ասաց քյուրերաց. - Ադաթ չունի մեջ կիիտերաց գյա, կես սահաթ տիրմ կկանչի տյուս, կզրյուցի, էլըմ կէրթա:

Քյուրեր նստեր են, կըսկընծու չեն կիտի՝ ի՞նչ անեն: Զինքն էլ կվախենա, կասի. «Չէլնի ուր սութ էրնա»:

Էն կըտոր գյախ կատուն կզանի իտուկ խավ սահանի մեչեն կառնի, կտանի թակավրու էօդեն:

Կնիյ կինի իտիվեն, կուզի կատվու պերնից առնել: Էն էլ կատվու խետ կմտնի թակավրու էօդեն: Կտիսնա, որ թակավոր ուր սիրուղ մեյդըրա պառկեր են: Քյիչըմ գյախ կայնի կիրիշկա, սորա ուր ալնախ կառնի, կթալի վեր թակավրու իրիսին: Կուզյա տակ, ապա՝ աշխար վերեն մթնուկ ի:

Թակավրու սիրող կակխի: Կտիսնա, որ ալնախըմ գյեռ վեր թակավրու իրիսին ի: Կմտածի, որ թակավրու կնիկ իկե, ուրենց տիսե, ուր սրտի պարկութնից կէլնի մեյ մաղ կորեկ կցվրվի:

Թակավոր կակխի: Կտիսնա, որ ուր սիրողն էլե, մեյ մաղ կորեկ կըվրվի:

Կէճնի տակ, պախած կնգյան կասի. - Արե՛, թակավոր քյե կանչի:

Թակավրու կնիկ կէլնի տյուս, ամա կիտի, թե ուր սովրցուցած խաբարն ի:

Կէլնի տյուս, կտիսնա որ աղորթ, գյեռ թակավոր տյուս կայներ ի:

Թակավոր կնգյան ծեռ կպռնի, կէրթա ներս:

Քյուրեր ուրենց տեղ են գյախ կկատղեն, զինքյ էլ ուրախութնե չկիտի ի՞նչխ կէլնի:

Աստծուց իրեքյ խատ խնձեռոր կէճնի, մեկ ասողաց, մեկ լսողաց, մեկ ականջ արողաց: